«ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ» ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայ ազգագրագետները, ապա նաև ճարտարապետները, գեռևս XIX դարի կեսերից, պատմական Հայաստանի տարածքում արձանագրեցին Թուխ Մանուկ անունով բազմաթիվ սրբավայր-ուխտատեղիներ։ «Հայաստանի մեջ,— գրում է Գ. Սրվանձտյանցը — իմ տեսած տեղերը, հազիվ գրեթե կը գտնվի գեղ մը, որ Թուխմանուկ չունենա. թեպետ քաղաքներու մեջ ալ կը գտնվին»[1]։ Եղել են բնակավայրեր, ուր հանդիպել են մի քանի Թուխ Մանուկներ։ Օրինակ, Մ. Միրախորյանը Արճակի մասին գրում է. «Գյուղիս մեջ 3 հատ Թուխ Մանուկներ կան»[2], իսկ Մանազկերտի մասին հաղորդում է, թե այնտեղ կան «տաղավարիկներ թվով վեց, յորոց երկուքն անորոշաբար սուրբ կը կոչվին և մնացյալ չորսն Թուխ Մանուկ»[3]։ Թուխ Մանուկներ են արձանագրվել Անբադում, Բաղնոցում, Ալաշկերտում, Համզաշենում, Կոփում, «Մշո աշխարհում», Խնուսում, Խաստուրում, Արտամետում, Կյուսնենցում, Վանում և շատ ու շատ ուրիշ վայրերում։ Մինչև օրս էլ տասնյակ Թուխ Մանուկներ կան Սովետական Հայաստանի շրջաններում։ Նրանց մի մասն արձանագրված է Հնությունների պահպանության և վերականգնման կոմիտեի մատյաններում։ Թ. Թորամանյանը տեսել և նկարագրել է Օշական, Եղվարդ, Արմտլու, Աղավնատուն և այլ գյուղերի Թուխ Մանուկներ[4]։

Պետք է նկատել, որ դեռևս ոչ ոք առանձին ուսումնասիրության առարկա չի դարձրել Թուխ Մանուկ կոչված հուշարձանների և նրանց հետ առնչվող պատկերացումների, սովորությունների խնդիրները։ Բոլորովին չունի անգամ մի հոդված, որը նպատակ ունենար ամփոփել եղած նյութերը և ուշադրություն հրավիրել նրանց վրա[5]։

Թուխ Մանուկ հուշարձանների մասին հիշված տեղեկությունները խիստ կցկտուր են և ցրիվ են եկած տարբեր ուղեգրություններում, գրքերում, արխիվային փաստաթղթերում։ Ըստ որում, այդ տեղեկություններն էլ տրվել են հընթացս այլ հարցերի քննության՝ որպես օժանդակ նյութեր։ Այնուամենայնիվ, համախմբելիս ստանում ենք բավականին հարուստ փաստեր, որոնք նպաստում են որոշ պատկերացում կազմելու Թուխ Մանուկների մասին առհասարակ և մտնելու նույնիսկ նրանց պատմության ծալքերի մեջ։ Գործին

---

1 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 115։

2 Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 128։

3 Նույն տեղում, մասն Գ, Կ. Պոլիս, 1885, էջ 48։

4 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 41—44։ Նույնի՝ Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 137, 222—223։

5 Այս փորձը մենք սկսել ենք դեռևս 1950-ական թթ. (տե՛ս Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 495—496, 575)։

մեծապես նպաստում են եղած մատենագրական առանձին վկայությունները, բանահյուսական փշրանքները, որոնք ցարդ չեն օգտագործվել՝ որպես Թուխ Մանուկների հետ առնչվող նյութեր։

Ճարտարապետական առումով Թուխ Մանուկները հիմնականում եղել են մատուռանման կառույցներ, իսկ երբեմն էլ՝ դերեզմանաձև փոքրիկ շինություններ։ Արձանագրված են նաև համեմատաբար մեծ հատակագիծ ունեցող Թուխ Մանուկների հիմքեր։ Գ. Սրվանձտյանցն այսպես է բնութագրում այդ կառույցները. «Ամենափոքրիկ մատուռ մը, կամ առանց կավաշաղախի շարված քարերով շենք մը, որո մեջ տղա մ՝ անգամ չպարունակիր... կամ դերեզմանաձև շենք մը, և անոնց մեջ Ճրագ ու խնկանոց... Թուխ Մանուկն այս է»[6]։ Փոքրիկ մատուռներ են նաև Թ. Թորամանյանի նկարագրած վերոհիշյալ Թուխ Մանուկները։

Թե ի՞նչ ծագում են ունեցել Թուխ Մանուկները, դեռևս ընդունելի կարծիք չկա։ Ոմանք ենթադրաբար են խոսել այդ մասին, ոմանք Թուխ Մանուկները կապել են նախաքրիստոնեական ժամանակների հետ, իսկ ոմանք էլ դրանք դիտել են որպես միջնադարյան նորաստեղծ ուխտավայրեր։ Այսպես, օրինակ, Մ. Միրախորյանը գրում է, թե Թուխ Մանուկները «ո՛ր դարեն կը գան և ի՞նչ անցքեր տեսած են՝ կը մնան անծանոթ տակավին. դոքա տեղացի Հայոց մասնավոր ուխտատեղիներն են, մանավանդ իգական սեռի համար, որ ամեն շաբաթ երեկոներն անմոռաց, խունկ, մոմ և ոմանք ևս ձեթ... հետերնին առնելով՝ կը տանին հոն տեղերը ու կը վառեն և կը ծխեն կուրծքի տակից մրմնջելով. «Աստված ողորմի մեր նախնյաց հոգվոյն»[7]։ Գ. Խաչկոնցը Թուխ Մանուկների պաշտամունքը կապում է ջրի պաշտամունքի հետ. «Ջրապաշտություն դեռ վառ կը մնա մեր ժողովրդին մեջ· Շատ տեղեր ջրի ակը սուրբ կհամարվի. Թուխ Մանուկներու ջրերը հիվանդություններ կը բժշկեն...»[8]։ Նման միտք է հայտնում նաև Գ. Շահինյանը[9]։ Թ. Թորամանյանը գտնում է, որ Թուխ Մանուկների պաշտամունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախաքրիստոնեական հերոս-նախնիների պաշտամունք[10]։ Հ. Աճառյանը, նկատի ունենալով մի քանի այլ հեղինակների կարծիքներ, Թուխ Մանուկները համարում է միջնադարյան երևույթ։ «Բարբառներում, —գրում է նա,— Թուխմանուկ նշանակում է «նոր հայտնված կամ անանուն սրբի դերեզման, որի վրա մի փոքրիկ տնակ են շինում՝ իբրև ուխտատեղի»[11]։

Բաֆֆին, գրախոսելով Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը», գրում է. «Հայոց «Թուխ Մանուկները» նույնպես կան զանազան արևելյան աղգերի մեջ։ Շատ հավանական է, որ Գ. Վ. Սրվանձտյանցի կարծիքը ճիշտ լինի, թե նրանք զանազան ժամանակներում նահատակված, քրիստոնյա մարտիրոսների արյուն թափած տեղերը լինեն։ Իսկ շատ անգամ ևս ժողովրդի սնահավատությունը ստեղծում է «Թուխ Մանուկները». հանկարծ պառվին մինը այնինչ ավերակի մեջ երազում կամ առաջյոք լույս տեսավ...» և այլն[12]։

---

6 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց։ էջ 115—116։

7 Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն..., մասն Գ, էջ 48։

8 «Բյուրակն», Կ. Պոլիս, 1898, էջ 202։

9 «Բյուրակն», 1901, էջ 490։

10 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության, 1942, էջ 42։

11 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 368։

12 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1958, էջ 110, նախապես տպագրված «Մշակում» (1874, № 2, էջ 1)։

Որ ուրիշ ազգերի մեջ ևս կան համապատասխան սրբություններ, այդ մասին կխոսվի ստորև։ Ինչ վերաբերում է Թուխ Մանուկների ծագմանը, ապա մեր որոնումները և լրացուցիչ փաստերի քննությունը ցույց են տալիս, որ վերոհիշյալ ենթադրություններից ընդունելի է Թ. Թորամանյանի կարծիքը։ «Հայտարակաց ուխտատեղիներ եղած են այս փոքր շինությունները և անցնելով քրիստոնեության շրջանին, միևնույն կոչումներով շարունակել են պահել անոնց գոյությունը և առհասարակ անվանվել են Թուխ Մանուկ»[13]։ Այս կարծիքի օգտին են խոսել նաև այն ազգագրագետները, որոնք Թուխ Մանուկները կապել են ջրի պաշտամունքի հետ։

Առանձին ուշադրություն է դրավում Թուխ Մանուկ հուշարձանների արխաիկ տեսքն ու անմխիթար վիճակը։ «Այս Թուխ Մանուկները միշտ ավերակ կը տեսնվին»,—գրում է Ս. Հայկունին[14]։ Հարց է առաջանում, այդքան մեծ տարածում ունեցող, համարյա ամեն գյուղում գտնվող, ամեն շաբաթ երեկո իունկ ու մոմով հարգվող, իրենց տարեկան համաժողովրդական տոներն ունեցող ուխտատեղիներն ինչո՞ւ են այդքան անշուք, ամենուր ավերված և փլատակի վերածված։ Ալաշկերտի Թուխ Մանուկը, օրինակ, պաշտվելիս է եղել ուղղակի որպես քարակույտ։ Տոնի ժամանակ հավաքվել են այնտեղ և կոխոտել «այն վայրերն ուր Թուխ Մանուկներ քայլած են»[15]։ Եվ դա այն դեպքում, երբ շրջակայքի քրիստոնեական սրբարանները գտնվելիս են եղել շեն ու խնամված վիճակում։ Ենթադրելի է, որ Թուխ Մանուկները նախաքրիստոնեական սրբավայրեր են եղել և հալածվել ու ավերվել են քրիստոնեության կողմից։

Թուխ Մանուկների մասին գրող հեղինակները միաբերան վկայում են, որ նրանց մեծարողները կանայք են, հատկապես տարիքավորները։ Նրանցից ոչ մեկը չի վկայում, թե Թուխ Մանուկներին ծառայել են հոգևորականներ կամ պաշտոնական եկեղեցու այլ ներկայացուցիչներ։ Դա ևս խոսում է նրանց ոչ քրիստոնեական բնույթի ու ծագման մասին։

Հետաքրքրական է նաև այն, որ քրիստոնեական ազգային և միջազգային սրբերի ցանկում իսպառ գոյություն չունի Թուխ Մանուկ անունով սուրբ կամ սրբություն։ Ընդհակառակը, կան անեծքներ, որոնց մեջ արդեն Թուխ Մանուկները, Թուխերը, Աղեկ Մանուկները դիտված են որպես չար ոգիներ և դևեր[16]։ Եվ եթե հանդիպում են աղթարական այնպիսի նշխարներ, որտեղ Թուխ Մանուկները կամ Աղեկ Մանուկները բարի ուժերի ներկայացուցիչներ են, ապա դրանք էլ ժողովրդական հին պատկերացումների արձագանքներ են։

Արդ, ովքե՞ր, ի՞նչ ուժեր ու ի՞նչ ըմբռնումների մարմնացումներ են Թուխ Մանուկները։ Վերևում տեսանք վկայություններ, որոնց համաձայն Թուխ Մանուկները պատկերված են որպես երբեմնի կենդանի մարդիկ, որոնք քայլել են Թուխ Մանուկ կոչված սրբավայրերի տեղերում կամ շրջակայքում։ Համանման պատկերացման արդյունք են նաև այն աղոթքները, որ մրմնջացել են պառավ կանայք, ասելով. «Աստված ողորմի մեր նախնյաց հոգվոյն»։ Հասկանալի է, որ ի դեմս Թուխ Մանուկների պաշտամունքի գործ ունենք նախնիների պաշ-

13 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, 1942, էջ 42։

14 Ս. Հայկունի, Բագրևանդ, մասն Ա, էջմիածին, 1894, էջ 326։

15 Նույն տեղում, էջ 195—199։

16 Ղ. Ալիշան, Հին հաւատք, Վենետիկ, 1895, էջ 205, 217։

տամունքի հետ։ Միայն թե այս նախնիները կոչվել են Թուխ Մանուկներ և ոչ թե առհասարակ նախնիներ։ Այստեղից էլ հատուկ կարևորություն են ստանում «Թուխ» և «Մանուկ» բառերը։ Ինչպես հայտնի է, «Թուխ» նշանակում է սև, իսկ «Մանուկ»՝ մանուկ կամ երիտասարդ։ Ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ այստեղ մանուկ բառն ունեցել է նաև կտրին, քաջ, արի, ճարտար իմաստը։ Եվ հենց այս իմաստով էլ այն ընկալված է Թուխ Մանուկ դարձվածքում։ Հետևապես այստեղ կարևորը ոչ այնքան սև-թուխ հասկացությունն է, որքան մանուկը։

Որ մանուկ բառը նաև կտրին, հերոս, քաջ, ճարպիկ, առաքինի իմաստն է ունեցել, դա երևում է այդ բառի օգտագործման եղանակներից։ Այսպես, Ներսես Շնորհալին, նկատի ունենալով առասպելական հերոսներ Տորքին և Վարազդատին, գրում է.

Մանուկ մի կայր ի Հայ[ք] գովան,
Քան զՍամսոն 'ւ այլ յաղթական.
Վէմ մի վերոյց մեծ տրամական,
Ի ծովն ընկեց, կանկնեաց արձան[17]։

Մանուկ մի այլ՝ ի այս նրման,
Էր ի ազգն Արշակունեան,
Հանշամ մանուկ է[ր] ու յիշման,
Ընդ նփրատ վազեաց բայլ մի լման[18]։

Ըստ նույն հեղինակի մանուկ է նաև աստվածաշնչային Եզեկիելը։

Թուխ Մանուկների ծագման կապակցությամբ Թ. Թորամանյանն ուշադրություն է հրավիրել հույն հեղինակ Անեբոսի հետևյալ տողերի վրա. «Հույները միմիայն աստվածներ չէին պաշտում, պաշտում էին նաև հերոսներ... կիսաստված անուններ կուտային։ Այնպես կարծիք ունեին, որ հերոսներն ապրել են իբրև մարդ, որոնք կամ թագավոր էին կամ մի հռչակավորի ծնունդ. այս մարդիկն իրենց կենդանության մի գերազույն քաջագործություն անելով, իրենց մահվանից հետո աստվածացել են։

Հունաստանի մեջ չկար քաղաք, որ առնվազն մի սրբարան չունենար (այսինքն մի տեսակ մատուռ) հերոսների հիշատակին կանգնված։ Շատ տեղեր երևակայում էին, որ այդ հերոսների գերեզմանն իրենց մոտ է, և աճյունները թաղված են այդ մատուռների մեջ։ Երկրի բնակիչները տարվա որոշ օրերուն մեջ կհավաքվեին սրբարաններու առջև կրոնական մի պաշտամունք կատարելու համար, այնտեղ ընծաներ կբերեին, հոգևոր երգեր կերգեին, գանազան պարեր կպարեին, ըմբշամարտություն և վազքեր կկազմակերպեին»[19]։

Այս նկարագրությունն այնքան է համապատասխանել հայոց Թուխ Մանուկներին և նրանց նվիրված ծեսերին, որ Թ. Թորամանյանը Թուխ Մանուկները համարել է հույներից փոխ առնված սրբավայրեր։ Անկախ այս անճշտությունից, հիշյալ մեկնաբանությունը միաժամանակ վկայում է, որ Թուխ Մանուկները համապատասխան դուգահեռ են ունեցել հույն իրականության մեջ։ Ավելին, մասնագետները նկատել են, որ Հայոց Թուխ Մանուկները հավասարապես պաշտվել են նաև այլազգիների կողմից։ Այսպես, օրինակ, Գ. Սրվանձտյանցը, փորձելով բացատրություն տալ Թուխ Մանուկների ծագման հարցին, նշում է, թե նրանց պաշտել են նաև թուրքերը[20]։ «Աղգագրական

17 «Տաղարան է սայ հոգոյ և մարմնոյ», Վենետիկ, 1512, թերթ 2—բ։

18 Նույն տեղում։

19 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, 1942, էջ 42։

20 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, էջ 116։

հանդես»-ում Համզաշեխ գյուղի Թուխ Մանուկի մասին գրված է. «Ժողովուրդ կավանդե թե Բոդու լամուկ է եղած, և քրիստոնյա դառնալով նահատակվեր է և սուրբ դարձեր»[21]։ Առավել ուշագրավ տեղեկության ենք հանդիպում Ա. Թոխմախյանի մոտ։ Նա նկարագրելով «Գարա-Գոյունցիների» կրոնական ծեսերը, գրում է. «Ուշադրության արժանի է Գարա-Գոյունցոց նվիրական սոսի ծառերին կատարած ուխտը։ Այդ ծառի տակին նոքա հավաքվում են օրերը տոնելու. ճրագ, մոմ են վառում, խունկ են ծխում, մատաղ են անում։ Այդ ուխտատեղիներին նրանք անվանում են «Հարա-Օղլան»՝ բառ առ բառ թարգմանություն Վասպուրական հայերի «Թուխ-Մանուկ» բառին։ Հայերի մեջ բացի վանական ուխտատեղիները, կան երկրորդական ուխտատեղիներ... ուր ճրագ, մոմ են վառում, խունկ են ծխում. ջերմախտի ջրերը, ուր լողանում են ջերմողները. ծառեր, որոնց ոստերի վերա կապում են հանդերձից պատռած կտորները, գլխից կտրած մազի փունջերը։ Այդ ամենը անվանում են «Թուխ Մանուկ»[22]։

Հիրավի, Ավարայրի դաշտում ապրող «Գարա-Գոյունլի» ցեղի նկարագրված կրոնական ծեսը՝ իր մյուս մանրամասներով, նման է Թուխ Մանուկների հետ առնչվող ծեսերին։ Սակայն դա հիմք չի կարող տալ մտածելու այն մասին, որ այդտեղ գործ ունենք աղգափոխված հայերի Թուխ Մանուկ սրբությունների հետ։ Իրողությունն այն է, որ թե՛ հայ և թե՛ այլազգի ժողովուրդների մեջ եղել են համանման պատկերացումներ ու համապատասխան սրբություններ՝ իրենց ծիսական սովորություններով[23]։ Հարցի մասին այսպիսի պատկերացում է ունեցել, ինչպես տեսանք, նաև Բաֆֆին։ Արդ, ո՞րն է այս իրողության պատմական հիմքը։

Սովետական և արտասահմանյան մասնագետների հետազոտություններից հայտնի է, որ նախնադարյան համայնական հասարակությունից մինչև ուշ միջնադար, համապատասխան փոփոխություններով հանդերձ, եղել են հասակային (տարիքային) դասեր, երիտասարդական եղբայրություններ։ Այդ կազմավորումների մեջ հնում ժամանակի երիտասարդությունը դաստիարակվել է հատուկ եղանակով և հետո միայն կյանք մտել որպես հասարակության լիարժեք անդամ։ Գոյություն են ունեցել կրոնա-սոցիալական տոհմա-ցեղային սրբություններ, հերոս նախնիների դիցաբանված կերպարներ, որոնց օրինակներով էլ մշակված են եղել երիտասարդների դաստիարակության եղանակները։ Հերոս-նախնու հիշատակը հարգվել է հատուկ սրբարան-դամբարանում, ջրերի ու ծառերի մոտ, սրբազան պուրակներում կամ բարձունքների վրա։ Երիտասարդական հասակային դասերից իսկական հասարակական արտադրության անցնողներին ենթարկել են փորձերի ու փորձությունների (վիրահատման, անգամ անդամահատման), մկրտել են, տվել են նոր անուն, դրանից հետո թույլ տվել, որ նրանք ամուսնանան և համարվեն լիարժեք մարդ։ Մասնագետները փաստարկել են, որ գոյություն են ունեցել տոհմական սրբազան պատմություններ, երգեր, պարեր, որոնք բոլորը մտնելիս են եղել երիտասարդության դաստիարակության համար ստեղծված

21 «Ազգագրական հանդես», Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 31։

22 Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտներ, մասն Բ, Թիֆլիս, 1882, էջ 36—37։

23 Այս առումով տե՛ս В. Минорский, Материалы для изучения... Али-Илахи, М., 1911.

ծրագրի մեջ։ Առանձին տեղ է տրվել ռազմա-մարմնամարզական վարժություններին, ըմբշամարտությանը, վազքին, նետաձգությանը և առհասարակ այն ամենին, ինչը կարող էր նպաստել առավել ուժեղ, առողջ ու հնարամիտ սերունդ ստեղծելու գործին։ Հին հեքիաթները, էպոսները, դիցաբանական զրույցները, իրենց երիտասարդական միջավայրով, հարսնացուներ ճարելու սրխիանքներով, երգերով ու պարերով, հիմնականում, վերոհիշյալ կազմավորումների կենցաղային արձագանքներն ու մնացուկներն են։ Փաստարկված է, որ երիտասարդական այդ կազմավորումները ոչ միայն իրենց ժամանակի մշակույթի հիմնական կենտրոններն են հանդիսացել, այլև հաճախ՝ հասարակական շարժումների և հեղաշրջումների շարժիչ ուժերը[24]։

Փաստերը ցույց են տալիս, որ հայ իրականության մեջ երիտասարդական միությունները կամ կտրիճվորաց եղբայրությունները, իրոք, փոփոխվելով, հարատևել ու պահպանվել են նաև միջնադարում։ XIII դարի անվանի գործիչ Հովհաննես Երզնկացին, կամենալով քրիստոնեական կերպարանք տալ Երզնկայի երիտասարդական եղբայրությանը, գրել է հատուկ կանոններ[25], ճառեր[26], անգամ բանաստեղծություններ[27]։ Կտրիճվորաց եղբայրությունների վերաբերյալ այլևայլ կանոններ ու թղթեր են պահպանվել նաև ուշ ժամանակներից[28]։ Դրանք մեծ մասամբ կապվում են հայկական գաղութների հետ, ուր խիստ մեծ է եղել նման եղբայրությունների անհրաժեշտությունը օտար միջավայրում դիմանալու և առևտրա-տնտեսական առօրյան կանոնավոր ընթացքի մեջ պահելու համար։ Ուշագրավ է, որ այս միություն-եղբայրությունների ավագները կոչվել են մանկտավագ (մանուկ և ավագ բառերից)։

Մանուկ և կտրիճ կոչումների մասին հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել X դարի կաթողիկոս Անանիա Մոկացու մի թղթում։ «ՆԳ (954) թուականին... յարեւ ումն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն. այր համեստ և գիտնական և ալեօք ծերութեամբ զարդացեալ»,— գրում է նա Գրիգոր Նարեկացու հոր՝ Խոսրով Անձևացու մասին։ Շարունակության մեջ ասում է, որ վերջինս «յանկարծակի իբրև ի գիւական հոգւոյն շարժեալ... յառաջեաց բաջաղմունս անհեթեթս։ Քանզի հրամայեր մինչև մօրուս նկեալ գլուխ խուզեալ մանկանց, թէ այսր աղագաւ կոչի կտրիճ, և զկնի մօրուացն դհերսն ապա թողուլ, երկայնիլ և մանկ ցուրունսն, զի այսր աղագաւ կոչեն մանուկ...»[29]։

---

[24] Այս հարցերի մասին տե՛ս С. П. Толстов, Пережитки тотемизма и дуальной организации у туркмен («Проблемы истории докапиталистических обществ», 1935, № 9—10); В. Я Пропп, Исторические корни волшебной сказки, Л., 1946; К. В Тревер. Древнеиранский термин «рагпа», «Известия» АН СССР (серия ист. и филол.), 1947, № 1.

[25] Լ. Խաչիկյան, Երզնկա քաղաքի եղբարց միության կանոնադրություն («Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 365—377)։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 12։

[26] Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 74։

[27] Նույն տեղում, էջ 72—74։

[28] Գ. Գովրիկյան, Դրանսիլվանիո հայոց Մետրապոլիսը, Վիեննա, 1896, էջ 73—95։ Վ. Գրիգորյան, Յազլովեց քաղաքի հայկական գաղութի «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 9, էջ 40—60։

[29] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2966, էջ 131ա։ Տե՛ս նաև «Արարատ», 1897, էջ 276։

Ինչպես տեսնում ենք, դրանք երիտասարդական-հասակային դասերի կենցաղի երբեմնի արձագանքներն են, որ X դարում օրինականացման իրավունք էին պահանջում խոսքով Անձևացու միջոցով և հանդիպում ուժեղ դիմադրության։ Առավել ուշագրավն այստեղ երկու դասի առկայությունն է. կտրիճների, որոնք ավելի փոքր են եղել (մինչև մորուք բուսնելը) և մանուկների (որոնց մորուքներն սկսել են երևալ)։ Ըստ այդմ էլ նրանց միմյանցից տարբերելու նպատակով կտրիճների մազերը սափրել են, իսկ մանուկներինը թողել և հյուսել։ Հետագայում է, որ մանուկ ու կտրիճ հասկացությունների այդ տարբերությունը վերացել է։

Այստեղից ինքնին հասկանալի է, թե ինչու հայրենների մեջ այնքան մեծ տեղ ունեն կտրիճ-մանուկներն առհասարակ, ուր երբեմն էլ դրվատվում է նրանց մորուքավոր լինելը.

Կամ մորվալի կտրիճ,
Որ գլուխն անցած լինենայ...

Միջնադարյան Հայաստանում հասակային դասերի գոյության մնացուկային փաստերից մեկն էլ Կոստանդին կաթողիկոսի (Բարձրբերդցի) այն կանոնն է, որի համաձայն «Ե (երեք) անգամ ժողովէ ի տարին երէցն յեկեղեցին որիշ՝ զարս և զկանայս և զկուսան աղջկունս և զկուսան կրտրճերն և յարմար հասակացն և վարուցն խրատ տացէ, զի ամէն հասակի և վարուց և բարուց խրատ որիշ է»[30]։

Հասակային դասերի ամենաուժեղ արձագանքները հարսանեկան ծեսերն են՝ իրենց ազաբներով, հարսնաքույրներով, փեսայի մազերը կտրելու արարողությամբ և այլ մանրամասներով։

Այստեղից ինքնին հասկանալի է, թե ինչու առհասարակ այդ կտրիճ-մանուկները կոչվել են Թուխ Մանուկներ։ Այստեղ թուխ բառով ընդգծվել է նրանց վարսերի սևությունը, ուստի Թուխ Մանուկ նշանակել է սևավարս կամ սև մազերով մանուկ։ Բնականաբար ազգագրական որոշ դավառներում կարող էին իշխել ոչ թե սև, այլ, ասենք, շեկ, ոսկեգույն վարսերը, ուր արդեն Թուխ Մանուկ արտահայտությունը պիտի տարբերակավորվեր։

Էնկրին այսպես մոտենալով է, որ մենք հնարավորություն ենք ստանում ավելի ընդլայնել մեր պատկերացումները քննվող հարցի մասին։ Օրինակ, հին աղբյուրներում հաճախ ենք հանդիպում զանազան Մանուկների, որոնց սոցիալական էությունը հասկանալի է դառնում Թուխ Մանուկների օգնությամբ[31]։ Հիշենք Մովսես Խորենացու վկայակոչած այն փշրանքը, որի մեջ դրվատվում է Վարդգես Մանուկը։ Այս Մանուկն էլ հերոս է՝ վարդագույն գեսերով (վարդ+գես), որն իջնում է Քասաղ գետն ի վար, կռում-կոփում Երվանդ արքայի դուռը և ամուսնանում նրա քրոջ հետ։ Մի՞թե նման հերոս չէ Վահագնը, որ «Հուր հեր ուներ և բոց ունէր մօրուս»։ Մի՞թե նման բնկալումների հետ չեն կապվում Տրդատ աստվածն ու նրա գիսավոր նվիրյալները։ Նման հերոսներ կան նաև Սասնա Ծռեր էպոսում՝ հայտնի Խոր Մանուկ անունով. ահա նրանց ցանկը. ա. Խոր Մանուկ, բ. Խոր Մանուկ՝ որդի Մհերի, գ. Խոր

30 «Բաներեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 284։ Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 308։

31 Այս հարցին մասամբ անդրադարձել ենք մեր մի ուրիշ հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 215—232)։

Մանուկ՝ Վանից, դ. Խոր Մանուկ՝ փահլևան, ե. Խոր Մանուկ՝ որդի Քեռի Թորոսի[32]։

Մեզ համար կարևոր նշանակություն ունի նաև Խոր բառը. այն, ինչպես նշել ենք, հավանաբար կամ հերոս նախնու անուն է, կամ էլ հուշ է խուրիների մասին[33]։

Ժողովրդական հեքիաթներից հայտնի է Օձ Մանուկ կամ Օձամանուկ անունով հերոս՝ կապված կերպարանափոխության հավատալիքի հետ, որովհետև հերոսը հանդես է գալիս օձ-վիշապի պատյանի մեջ[34]։ Պակաս ուշագրավ չէ միջնադարյան մի պոեմի հերոս Ֆարման Մանուկը[35], որի սխրանքները նույնպես ավարտվում են ամուսնությամբ, ինչպես Օձ Մանուկինը, Վարդգես Մանկանը և առհասարակ բոլոր Թուխ Մանուկներինը։

Նշված փաստերը գալիս են լայնացնելու մեր գիտելիքները Թուխ Մանուկ ըմբռնումի վերաբերյալ, հիմք տալով որոնվող նյութերի մեջ հաշվի առնել ոչ թե լոկ «Թուխ Մանուկ» արտահայտությունը, այլ նկատի ունենալ նաև նրանց հնարավոր տարատեսակները։

Այսպես մոտենալով խնդրին, տեսնում ենք, որ քննվող ըմբռնում-պատկերացումները իրենց տարբեր անվանումներով անջնջելի կնիք են դրել նաև աշխարհագրական անունների ու անձնանունների վրա։ Հիշենք մի քանի օրինակ։ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Գոզալ դարան ձորահովիտ մի է. մեջեն կանցնի վտակ մը, որ... կերթա Թուխ գեղի մոտերեն կը թափի Վանա ծով, հոն կը կոչվի Թուխա գետ»[36]։ Պ. Կալհոկեցին, օգտվելով նաև հին մատենագիրներից, գրում է. Գեղերու գետը «կերթա Թուխ անուն գյուղի արևելյան կողմեն», «հասանեին ի ջուր ինչ գեղջ մի Թուխ Մանուկ»[37]։ Ղևոնդ պատմիչը դեռևս VII դարում խոսում է Տայքի Թուխարս (Թուխարք) ամրոցի մասին, որը հիշվում է նաև ուրիշ հեղինակների կողմից[38]։ Հռիփսիմյանց կույսերին վերաբերող մի վկայության մեջ կարդում ենք. «Հասին ի գաւառն Բզնունեաց։ Եւ ոմանք ի նոցանէ անդէն մնացին, մերձ ի Խլաթ։ Եւ այլքն գնացին ի տեղին, որ կոչի Թուխ. ի գաւառն Աղձնեաց, որ այժմ կոչի Խողձ։ Եւ ոմանք անդեն մնացին ի Թուխ»[39]։ Վանում եղել է հատուկ ջրհոր, որը գտնվելիս է եղել Ս. Նշան եկեղեցու մոտ՝ մատուռի ներսում և կոչվել է Թուխ Մանուկ[40]։

Այսպիսով, տեսնում ենք, որ Թուխ Մանուկ հասկացությունը իր կնիքն է դրել գյուղերի, գետերի, ամրոցների, ջրհորների անունների վրա։ Անձնանուններից կարելի է հիշել՝ Թուխայր, Թուխան, Թուխթանկ, Թուխիկ, Թուխծամ, Թուխմանուկ, Թուխման և այլն[41]։

Փաստերի այս խումբը մի կողմից խոսում է մինչև հեռավոր ժամանակները գնացող, իսկ մյուս կողմից՝ մինչև ուշ միջնադար եկող Թուխ Մանուկ

---

32 «Սասնա Ծռեր», հատ. Բ, մասն երկրորդ, Երևան, 1951, էջ 919։

33 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 11, էջ 52—64։

34 «Հայ ժողովրդական հեքիաթներ», Ա, Երևան, 1959, էջ 236—240, Գ, Երևան, 1962, էջ 175—181։

35 «Պատմութիւն Ֆարման Մանկանն», աշխատ. Շ. Նազարյանի, Երևան, 1957։

36 Գ. Սրվանձտյանց, Համով հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 113—114։

37 Պ. Կալհոկեցի, Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս, 1881, էջ 35։

38 Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 617։

39 Հ. Տաշյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց..., Վիեննա, 1895, էջ 63։

40 «Ազգագրական հանդես», գիրք XXVI, Թիֆլիս, 1917, էջ 198։

41 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 366—369։

հասկացության հնության ու երկարատև գոյության մասին։ Նման հարատևությունը պայմանավորված է եղել համապատասխան սրբերի ժողովրդական բնույթով։ Ըստ երևույթին, նրանք օժանդակ ու երկրորդական կարգի սրբություններ են համարվել ոչ միայն միջնադարում, այլև նախաքրիստոնեական ժամանակներում։ Կարևոր աստվածություններին նվիրված տաճարների կողքին Թուխ Մանուկները եղել են համաժողովրդական, ամենուր հանդիպող, պարզ ու մատչելի ուխտատեղիներ՝ կապված երիտասարդության դաստիարակության, երգ ու պարի, մրցույթ-մարզանքի, ինչպես նաև մկրտության և ամուսնության արարողությունների հետ։

Քրիստոնեությունը կատաղի պայքար մղելով հեթանոսական պաշտամունքների դեմ, չէր կարող խնայել նաև Թուխ Մանուկներին։ Հռիփսիմյանց կույսերի սրբությունը Թուխ կոչված վայրը և այնտեղ մնալը, ինքնին հող է՝ համապատասխան պայքարի։ Հենց այդ պայքարով պիտի բացատրել բոլոր Թուխ Մանուկ մատուռների ավերված վիճակը։

Ժողովուրդը, սակայն, իր հնամենի ավանդների, կենցաղային սովորությունների ուժով (թեկուզ և մուռանալով հեթանոսական Անահիտների ու Արամազդների պաշտամունքը և որդեգրելով քրիստոնեական ըմբռնումներ) չի դավաճանել Թուխ Մանուկներին։ Հետագայում, երբ աստիճանաբար մեղմացել է քրիստոնյա գործիչների պայքարը, հանդուրժելի են դարձել նաև Թուխ Մանուկները, երբեմն էլ արժանանալով վերակառուցման ու քրիստոնեականացման։ Բուն բովանդակությամբ, սակայն, նրանք այդ նոր տեսքով էլ պահպանել են իրենց ժողովրդական ոգին, հեթանոսական էությունը։ Այստեղ ոչ միայն խունկ են ծխել ու մոմ վառել, այլև զվարճացել են կերուխումով, մրցություններով և պարերով[42]։ Պաշտամունքի առարկա են հանդիսացել ոչ միայն Թուխ Մանուկ հերոս-նախնիները, այլև նրանց մոտ գտնվող ջրերը, ծառերը։ Եթե քրիստոնյա գործիչներն այնտեղ տարել են խաչքարի բեկորներ և այլ մասունքներ, ապա նրանց փլատակների մեջ հաճախ պահպանված են եղել սեպագիր քարեր։ «Թուխ Մանուկ կա Անդաբ և Բաղնոց,— գրում է Ս. Հայկունին,— որո դուռը ևս կա սեպագրություն, որպես Ալաշկերտի Թուխ Մանկան քարերուն մեջ ևս գտնված էր քառակուսի բևեռագրով քարը»[43]։ Հնի և նորի հաշտեցման այս իրողությունը վկայվում է նաև ուրիշ փաստերով։ Նույն հեղինակը գրում է, թե «Խաստուրա ս. Աստվածածին վանքը ուխտի եկող հասարակությունը Թուխ Մանուկ ևս պիտի գնա, որ իր ուխտը կատարյալ համարվի»[44]։ Այս փաստը հետաքրքրական է նաև նրանով, որ յուրովի հուշում է Աստվածածնին և Թուխ Մանուկներին նվիրված տոների առնչությունը։ Ինչպես հայտնի է, քրիստոնեությունը հին տոները փոխարինում էր նոր տոներով։ Ուստի հիմք կա մտածելու, որ Թուխ Մանուկներին նվիրված տոները հետո հատկացվել են Աստվածածնին։ Այս առումով ուշագրավ է Ս. Հայկունու վկայությունն այն մասին, որ Ալաշկերտի Թուխ Մանուկի տոնը տեղի է ունեցել «Աստվածածնա տոնի օրն»[45]։ Համապատասխան վկայություն կա նաև Համզաշեխ գյուղի Թուխ Մանուկի վերաբերյալ. «ուխտագնացությունը կը պատահի օգոստոսին— ս. Աստվածածնա տոնին»[46]։

42 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, էջ 41։

43 Ս. Հայկունի, Բագրևանդ, էջ 326։

44 Նույն տեղում, էջ 195։

45 Նույն տեղում, էջ 195—199։

46 «Ազգագրական հանդես», Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 31։

Այս հետքերով, անշուշտ, հնարավոր կլինի պարզել Թուխ Մանուկների տոնական հանդիսությունների հետ կապված ուշագրավ խնդիրներ, որը, սակայն, այժմ դուրս է մեր ծրագրից[47]։

Քրիստոնեական շրջանի պատկերացումների մեջ Թուխ Մանուկների արձագանքը կարող էր անվել նաև աստվածաշնչային համապատասխան սրբերից ու սրբություններից։ Այդպիսիներից էին, օրինակ, հռչակավոր Սրեֆ Մանկունը, հերոսներ, որոնք հանուն հայրենիքի նետվեցին բաբելոնյան բոցերի մեջ և, ըստ դիցաբանված զրույցի, անվնաս մնացին։ Կարելի է հիշել նաև հանուն քրիստոնեության Սեբաստիայի լճում նահատակված Քառասուն Մանուկներին։ Զլարթնոց տաճարի անունն էլ, վերջին հաշվով, կապվում է մանուկների զաղափարի հետ, միայն թե այստեղ նկատի են առնված երկնային մանուկներ։ Մեր կարծիքով Թուխ Մանուկային ծագում պիտի ունենա նաև Օշականի Մանկանոց մատուռ-եկեղեցին, մանավանդ որ Օշականում կան երկու ուրիշ Թուխ Մանուկներ։ Այն էլ ասենք, որ Քառասուն Մանուկ հասկացությունը միշտ չէ, որ պիտի կապվի Սեբաստիայի նահատակների հետ։ Գ. Սրվանձտյանցը, նկարագրելով այդպիսի անուն ունեցող մի հուշարձան, գրում է. «Խրբ գեղին մոտ... ջրի մեծ ակ մը կա, որ ջուր կը բղխե տարվան երեք ամսվան մեջ միայն՝ մայիսին, հունիսին և հուլիսին...։ Համբարձման տոնին դառ են մատղում, այդ օրն էլ բղխում է։ Զբղխող տարիներին բերքի պակաս է առաջանում Խնուսում և շրջակա գյուղերում։ Խնուսա սեղոսն է այս ջուրը»։

«Ջրույն ակն,— շարունակում է նա,— կոնքաձև ավազանի մը պես է. այս ավազանի մեջտեղ կա մի գերեզման իբր երկու կանգուն բարձրությամբ և հինգ կանգուն երկարությամբ, քարով և հողով բված, և հողերու մեջ վարդի թփեր տնկված, ջուրն ելած ժամանակ այդ գերեզմանը կը շրջապատե լճակաձև, և շիրիմը կը դառնա կղզի մը... Այս գերեզմանը իբրև սուրբ կը պաշտեն հայերը Քառասուն Մանկունք անունով, և քյուրտերը՝ Հալիլ Բաբա...»[48]։

Ամեն ինչից երևում է, որ այս գերեզմանը առնչություն չունի քրիստոնեության հետ. դա ավելի շուտ Թուխ Մանուկներին նվիրված հին սրբարան է՝ կապված հատկապես ջրի պաշտամունքի հետ։ Նրա անունը, նախապես, ըստ երևույթին, եղել է Թուխ Մանուկ, ապա քրիստոնեական Քառասուն Մանկունքի ազդեցությամբ վերափոխվել։ «Հալիլ Բաբա» քրդական անունի մեջ պահպանված է ավելի շատ Թուխ Մանուկի (Եղակի), քան Քառասուն Մանկանց (Հոգնակի) արձագանքը։

Քրիստոնեության ամենօրյա քարոզն ու կյանք մտնող պատկերացումները Թուխ Մանուկների զաղափարն առնչել են նաև այնպիսի սրբությունների հետ, ինչպիսիներից է Ավետարանը։ Վկայվում է, որ Բերկրիի «գյուղացիք մի հատուկ սնդուկի մեջ կպահեն Թուխ Մանուկ անվամբ մի ձեռագիր ավետարան, որում չի մերձենայր աշխարհական ձեռք, այլ երբեմն, նման մասունքի դուրս կը հանի քահանայն և կընթեռնու զայն ի բժշկություն հիվանդաց

47 Թուխ Մանուկ կոչվող սրբավայրերի և նրանց վերանորոգված նմուշների մեջ առկա են համեմատաբար մեծ հատակագիծ ու ծավալ ունեցող կառույցներ։ Այս շեղումը կարող է թույլ տալ ենթադրելու, թե դրանցից շատերում հեթանոսական ավելի խոշոր սրբավայրեր են եղել, և Թուխ Մանուկ են կոչվել, ըստ երևույթին, հետագայում։

48 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, էջ 71—72։

կամ ախտաժետաց և ի բարձումն աստվածային պատժոց»[49]։ «Սասնա Ծռեր» էպոսում, ի շարս այլևայլ սրբերի ու սրբությունների, ոգեկոչված են նաև «...Թուխ Մանուկ, Մեռել Հարոյց Աւետարան»[50]։ Միջնադարյան կախարդահմայական բանաձևերում հանդիպում ենք այնպիսի տողերի, ուր Թուխ Մանուկը հիշվում է քրիստոնեական սրբությունների հետ միասին.

Գանձասարայ սուրբ Նշանին,
Ջալերու Թուխ Մանուկին...[51]

Ժողովրդական երգերից մեկում Թուխ Մանուկները ոգեկոչված են բերքի պահպանության համար.

Մեռնիմ Մրգի սոր-Թուխ-Մանուկ,
Ճուղ Ճուղ կորեն բորկես կայնուկ...[52]

Այս և նման ուրիշ փաստերը ցույց են տալիս, որ Թուխ Մանուկները հետագայում միաձուլվել են քրիստոնեական սրբերին և ոգեկոչվել նրանց հետ միասին, երբեմն՝ ավելի ազդու հեղինակությամբ։ Նման պարագաներում, բնականաբար, հեշտությամբ միմյանց հետ կշփոթվեին և հաճախ էլ կձուլվեին Թուխ Մանկանց, Երից Մանկանց, Քառասուն Մանկանց և առհասարակ Մանկանց պաշտամունքի հետ կապված հուշարձաններն ու պատկերացումները։ Եվ դա միանգամայն բնական է, մանավանդ որ աստվածաշնչային և քրիստոնեական պատկերացումների մեջ ևս իրենց որոշակի տեղն են ունեցել երիտասարդական միություն-եղբայրությունների սոցիալական հիմքով պայմանավորված ըմբռնումները։ Այս առումով ուշագրավ են, օրինակ, քրիստոնեական եկեղեցու որդեգրած երկրորդ կնունքը, մաղերի հատման արարողությունը, նոր անուն առալու պարտադիր սովորությունը և այլն։ Ինքը՝ Քրիստոսն էլ, ըստ էության, յուրատեսակ մի Թուխ Մանուկ էր։ Եվ եթե կրոնական-աստվածաբանական գրվածքներում մեծ հակասություններ են ստեղծվում հին ու նոր սերունդների միջև, ապա ժողովրդական մտածողության մեջ այդպիսի անջրպետներ համարյա չկան, ուստի այստեղ աստվածամայրը շարունակում է ապրել Անահիտի բարեմասնություններով, Քրիստոսը՝ Վահագնի, Արամազդի, Դիսանեի և այլոց։

Այս առումով բացառիկ արժեք ունի միջնադարյան ժողովրդական մի երգ, որի մեջ դրվատվում է մի իսկական հերոս-մանուկ կամ հրաշագործ Թուխ Մանուկ, որն ի վերջո նույնացվում է Քրիստոսի հետ։ Այդ երգում նկարագրվում է, թե ինչպես կախարդական և ամենազոր ծաղիկը գտնվում է օձի բերանում։ Եվ ահա մանուկ-հերոսը անձնուրացությամբ խլում է այդ ծաղիկն օձի բերանից և նվիրաբերում մարդկությանը.

Ծաղիկ ա՛յն ծաղկին ասեմ,
Որ օձին բերնիկն է բուսեր.
Շատ մարդ այն օձին անկն
Զայն ծաղկին հոտն չէ առեր.
Մանուկն մի Հոոմանց տանէն
Զարևու բարկիկն է տուեր.

---

49 Մ. Միրախորյան, նշվ. աշխ., մասն Գ, էջ 22—23։
50 «Սասնա Ծռեր», հատ. Բ, մասն երկրորդ, էջ 317։
51 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2434, էջ 96ա։ Տե՛ս նաև ձեռ. № 6156, էջ 114ա։
52 «Աղդագրական հանդես», Ե գիրք, էջ 197—198։

Գացեր զօձն ի ֆուն տեսեր,
Ձայն ծաղիկն ի բերնէն առեր...
— Մանո՛ւկ, ֆո արեդ ասեմֆ,
Մեֆ այդ զուն ծաղիկ չեմֆ տեսեր...

Ձվարդն չեմ կարեր ղաճրեր,
Որ բլբուլն բերնովն է զովեր.
Ոետին, այլ ինչ ասեմ,
Որ ի փայտ խաչին է բուսեր...[53]

Մոտավորապես այսպիսի հրաշագործ էակներ են համարվել Թուխ Մանուկները, որոնք ժողովրդի համար բարիքներ են ստեղծել, իսկ իրենք՝ զոհվել։ Տվյալ դեպքում Մանուկ-Հերոսը ի վերջո պատկերված է «ի վերայ փայտ խաչին»։

Այս ոգով է գրված Ֆրիկի մի տաղը՝ նվիրված համասփյուռ ծաղկին[54].

Այս է ճամասփիւռ ծաղիկն,
Որ քափէ զմարդն ի մահու...
Զայս դեղս ով ուզել կամի,
Թող զուզէ զիւր սիրտն առիծու.
Շատ լերդ ու լեղի ուտէ,
Ու ապա նա զայս գըտընու...

Ավելի պերճախոս է ժողովրդական մի ուրիշ երգ՝ «Ա՜յ իմ աստուածատուր, ա՜յ, կտրիճ» սկզբնատողով, գրի առնված դարձյալ միջնադարում, բայց ծնված ավելի վաղ ժամանակներում։ Ըստ էության այդ երգը մկրտության աղոթք-բանաձև է՝ օգտագործված հասուն տարիքում մկրտվողների համար։ Մկրտվողի անունը երգում հիշվում է «այս անուն» անորոշ դարձվածքով, որպեսզի կնունքի ժամանակ դրա փոխարեն տրվի մկրտվողի անունը։ Մկրտվողն էլ կոչվում է «աստվածատուր կտրիճ», այսինքն, դիցաբանական հերոս-մանուկ։ Առանձնապես ուշագրավ է այդ հերոսի տոտեմական ծագումը.

Թէ զինֆ՝ մարդ-մարդն չէ, ա՜յ, բերել, էղաւդ, օ՜յ,
Ոչ կնիկ դայեկ սընուցեր, ընկալ, օ՜յ.
Թէ եղն ի մօրին, ա՜յ, բերել, էղաւդ, օ՜յ,
Խրկազվին կաքով սընուցեր, ընկա՜լ, օ՜յ...

Եվ այս բոլորից հետո այդ հերոսը կապվում է Քրիստոսի հետ.

Յիսուս ինֆնուան, այլ, եղեր. էղօյտէ.
Որդանան գետըն մըկրըտել, ընկալ, օ՜յ.
Կրնֆել, իր անուն, ա՜յ, դրել, էղօյտեղ,
Ա՜յս անուն մեր նոր քազաւոր, ընկալ, օ՜յ[55]:

Միջնադարում գրի են առնված հնաբույր ուրիշ երգեր ևս, որոնց մեջ նորից առկա են Թուխ Մանուկների մասին եղած պատկերացումների արձագանքները։

Վերևում խոսվեց այն մասին, որ Թուխ Մանուկները կապված են եղել նաև ջրապաշտության հետ։ Ջրի և սիրո մոտիվը հիշված երգերի հիմքն է, իսկ

---

53 *Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 268—271։ Ամեն տողից հետո կրկնակ՝ Հէ՜,* իմ տուն, ճէ՜ *կամ՝* ճէ՜, ճէ՜, ճէ՜:

54 *«Ֆրիկ» (ժողովածու), Երևան, 1937, էջ 199։*

55 *Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 126—127. տե՛ս այս երգի մի այլ տարբերակը «Թագվոր իմ ոսկի» սկզբնատողով, նույն տեղում, էջ 124—125 (այսուհետև այս գրքի էջերը կտրվեն բնագրում, փակագծերի մեջ)։*

հերոսներն էլ ուղղակի կոչվում են Թուխ, Թուխ կտրիճ կամ Թուխ Մանուկ։ Դրանք իսկական Թուխ Մանուկային երգերի արձագանքներ են։ Նրանցից մեկում կարդում ենք.

Այդ վայրի լեռնէդ ի վայր
Ջուրն ի շինուդ մէջն անցանէր, հա՜յ,
Թուխ Մանուկ մի դուրս ելեր,
Ձեռքն ու գերեսն էր լուացեր, հա՜յ...
— Ջո՛ւր, դուն ի յո՞ր աղբիւրն կերբաս...
— Ես ի յայն աղբիւրն կերբամ,
Որ սիրելին զայ՝ զովանայ, հա՜յ,
Փուրացի՛ր, ե՛լ ընդ առաջ,
Ի զեղ նորին զուարճացիր, հա՜յ։
(էջ 152—154)

Ուշադրության արժանի է Բաղեշում դրի առնված վիճակախաղի մի նշխար, ուր դրվատվում են «երկու Թուխ ու Թամ կտրիճ»-ներ, որոնք աղբյուր են պարգևել մարդկանց։ Ցմոռանանք, որ «Բաղեշի մեջ ջուրին ակը սուրբ համարված է. Թուխ Մանուկներու ջրերը ախաաժետներուն բժշկություն կը պարգևեին»[56]։ Այս գաղափարի փայլուն դրսևորումն է ահա հիշված խաղիկը.

Ես ունէի երկու բուխ ու բամ կտրին,
Անշափ քար ու խին երին,
Ինչուր հանին աղբուրն ի սահրին.
Որն որ էն աղբուրի ջուր խմէր՝
Ամէն կտրին ու մանուկ բերեր[57]։

Այսպիսով Թուխ Մանուկները սոսկ աղբյուրներ պարգևողներ չեն. նրանց ստեղծած աղբյուրից ով որ ջուր խմեր՝ «Ամէն կտրիճ ու մանուկ բերեր»։ Մի՞թե հենց այդպիսի ծնունդ չունեին Սանասարն ու Բաղդասարը՝ սերված աղբյուրի ջրից։ Մի՞թե նման պատկերացումների հետ չեն կապված եղել սուրբ համարված աղբյուրները։

Թուխ Մանուկների մասին եղած պատկերացումների ուշագրավ արձագանքներ կան միջնադարում դրի առնված երգերի մի ուրիշ խմբի մեջ։ Այստեղ և՛ տղաները, և՛ աղջիկները «Թուխ» են, նրանց զրույցը՝ սիրո և ամուսնության խնդրի շուրջն է՝ համեմված դիցաբանական բմբռնումների մնացուկներով։ Այդ երգերից մեկն սկսվում է աղջկա և տղայի երկխոսությամբ.

— Կրտրի՛ճ, գնէ՛, բէ գնել կարես,
Ճորտակ ու չեմ ծանտրուզնոչ։
— Թո՛ւխ, ամ ծոցուտ գին հրամէ,
Դրնեմ զբեզ. բէ գնել կարեմ։
— Թուխ մաստրն[58] դու՝ ի բուխս և յուս,
Ողս է ընկեր, գին՝ ծոցերուս։

Տղան կտրիճ է ու Թուխ, վարսերը փռված են ուսերին. աղջիկը ուզում է հանձնվել նրան և որպես գին պահանջում է օղեր՝ բայց առաջադրելով դժվարին պայման. տղան աղջկան պիտի այցելի ոչ երկնքով, ոչ դետնով, ոչ էլ երկնային որևէ էակի օգնությամբ, ոչ ամպ, ոչ պարզ և ոչ էլ արևոտ եղանակին, ոչ մերկ, ոչ բոբիկ և ոչ էլ հագուստով, ոչ ձիով, ոչ ջորիով և ոչ էլ հետևակ։ Թուխ կտրիճը, սակայն, գտնում է հնարը. որսում է «խրգագուի ձագ», փա-

56 «Բյուրակն», 1901, էջ 490։

57 Ն. Սարգսյան, Տեղագրություն ի Փոքր և ի Մեծ Հայս, 1864, էջ 245—246։

58 «Թուխ մաստ» նշանակում է Թուխ հերոս. առհասարակ մաստ (մաստն) բառի բացատրության համար կարևոր նշանակություն ունի Մաշտոցի անվ. Մատենադարանի № 3205 ձեռագրի (թերթ 40ա) հետևյալ վկայությունը. «Կիւրոս արքայն պարսից, գոլով արտադրեցեալ յանտառի իմիք ի մահ, շուն ոմն էգ դիեցուցեալ սնոյց զնա, վասնորոյ ի զարգանալն իւր եղև հզօր պատերազմական և ամենեին համանման մաստեաց, ըստ որում գրէ Յուստինոս...»։

Բաթվում նրան, նստում քաջ արծվի թևին, հասնում աղջկա տան մոտ. և բացականչում.

Թուխ, դուն ի դուրս արեկ, ի դուրս,
Արեկ կամկար ու նմալով.
Ինչ դուն ասիր՝ նա ես արի,
Ինչ ես ասեմ՝ զայն բեր ի դուրս...

Հետևում է տղայի առավել դժվարին պայմանը։ Աղջիկը չի կարողանում իրագործել այն, ուստի հանձնվում է.

Թուխն ալ չունէր, որ զայն բերեր.
Մով-ծով աչվին արտասուէր.
Մով-ծով աչվին արտասուէր,
Կամար օնմվին բօրուեցէր.
Կամար օնմվին բօրուեցէր,
Կանանչ արտեր դեղնեցրնէր.
Մէկ-մէկ կոնակրն արձկրէր,
Թագորն ի ծոցն մեծարէր։

(էջ 113—114)

Սի՛ ուրիշ երգում Թուխ դուլգի սիրո պատմությունը կապված է կալ կալսելու աշխատանքային առօրյայի հետ. նորից առկա է դիցաբանական պատկերացումը։ Դեպքը տեղի է ունենում Մասիսի լանջին.

Ասիս-Մասիս լեռնէտ ի վար.
Հօ՜, որ ոսկի կալ կու կուտեն.
Սամու մազիմրն կու ձգեն.
Ինչ հոդեղէն եզն ի լուծին.
Իր մոմեղէն լուծն ի վիզին...
Դէն բուլ մ՚ աղէկրն զալապան,
Կրտրին աղեկանց մանողան.
— Թո՜ւխ, ամ դու տուր հատ մի կալէտ,
Թէ չէ, ատնում պամ մ՚ երեսէտ...

Այստեղ էլ աղջիկը պիտի հանձնվի.

Կամկար կօճակրն ասկրես,
Թագորն ի ծոցն հրամես։

(էջ 116)

Զարմանալի մեծ տարածման ու տարբերակավորման է արժանացել ջրի ու աղջկա հետ կապված Թուխ Մանուկային մի ուրիշ երգ։ Այստեղ երևան են գալիս մի բուխ ու ապլոր աղջիկ և մի բուխ ու բանամ կտրիճ։ Աղջիկը գնում է աղբյուրը ջրի. տղան հետևելով նրան, ջուր է խնդրում.

Թէն բուխ մ՚ էր առեր.
Աղորերես, ա՜յ,
Իր մօշուպայեկն, ա՜յ,
Օ՜խ, իմ պարոն, էյնեկ,
Ու կերբար դէպ ի ջուրն, ա՜յ.
Կոտրին էր հեծել,
Աղորերես, ա՜յ,
Իր համալ ջորեկն, ա՜յ,
Օ՜խ, իմ պարոն, էյնեկ,
Ու կերբար դեպ ի հետն, ա՜յ...

(էջ 141)

Այս տարբերակը գրի է առնված միջնադարում։ Կան և ուշ շրջանի գրառումներ, ուր սովորաբար երևան են գալիս երկու աղջիկ ու երկու տղա.

Երկու ծամաւոր աղջիկ
Կուժր ձեռ աղբիւր գրնացին,
Երկու բուխ-բանամ կրտրին
Ձիներ խեծած ինոնց իտև գրնացին...

(էջ 145)

Ահա այս հենքի վրա է միշտ, որ լսվում է տղաների և աղջիկների պատասխանը.

— Աղջի՛կ, աղբորդ արևուն,
Նոշխարովը ջուր տուր խմիք:
— Ջուրս տաք է, չէ՛ սառեր,
Մեր սիրուն շատ մարդ է մեռեր:

— Ջուր տուր, թող մենք ալ մեռնինք,
Հաշուինք, թէ մարդ չէ բերեր,
Բերեր է Մրզա սուլթան,
Բացուեր է, վարդ, մանուշակ...
(էջ 147)

Ուշագրավ է, որ վերևում մեջբերված համարյա բոլոր երգերը, որոնք կապվում են Թուխ Մանուկների հետ, ոչ այլ ինչ են, քան հայրեններ. այդպիսիք են, օրինակ, «Ծաղիկ այն ծաղկին ասեմ», «Ա՜յ իմ աստուածատուր, ա՜յ կտրիճ», «Այգ վայրի լեռնէդ ի վայր», «Թէն թուխ մ' էր առեր» տողերով սկսվող երգերը: Հայրենների տաղաչափության հիմքեր կան անգամ Վարդգես Մանկան մասին պահպանված փշրանքում.

Հատուած գնացեալ Վարդգէս
Մանուկն ի Տուհաց գաւառէն,
ԶՔասաղ գետով եկեալ,
Նստաւ զՇրէշ բլրով...[59]

Հայրենային ծաղում ունեն նաև «Սասնա Ծռերի» նախերգանքներն ու երգերի զգալի մասը:

Բուն հայրեններում Թուխ Մանուկյան արձագանքներն ավելի առատ են: Ըստ որում, Թուխ Մանուկային ոգին առկա է ոչ միայն այն հայրեններում, որոնց մեջ հանդիպում ենք Թուխ Մանուկ, կտրիճ, աղվոր *և նման այլ կոչումների, այլև այն հայրեններում, որտեղ նման անվանումներ չկան, բայց առկա է երիտասարդական հերոսության դրվատանք: Այս առումով ուշագրավ են հետևյալ հայրենները, մեկն՝ աղջկա, մյուսը՝ տղայի անունից.*

— Ամուր եմ քարիդ նման,
Որ մրճիկն ի յիս չի բանի.
Բարձր եմ բուխ ամպիդ նման,
Որ ոչ ով ի յիս չի հասնի...

Աղեղն եղնի լինի
Ու լարն ի վերայ գալենի.
Քաշողն քաջորդի լինի,
Հապա թէ իմ սիրուն հասնի:

— Հա՜յ իմ ճերմակծոց բազայ.
Ճերմակծոց ու ծինն ի վրայ.
Քո բունդ է անտառ մորին,
Ի արծըվին աճիկն ի վրայ.

Երթամ քաջ արծիւ լինամ.
Գամ, կռուիմ, մինչ որ լուսանայ.
Թ' ապրիմ, նայ անուն հանեմ.
Թէ մեռնիմ, հաշվեմ, թէ չեղայ[60]:

Առհասարակ հայրենների քնարական հերոսը քաջ մանուկ, աղվոր կտրիճ է՝ հանուն սիրո, ընդդեմ բոլոր տեսակ չար ուժերի: Եվ հենց դա է, որ մեզ տանում է դեպի Թուխ Մանուկների ազգագրական բնաշխարհը, նրանց հետ կապված հնամենի պատկերացումները և տոնահանդեսները՝ երգ ու պարով, հայրեն-անտունիով: Նրանց մեջ ևս հերոս նախնիներին նմանվելու, նրանց սիրո ու սխրանքի շարունակողը հանդիսանալու հնամենի ավանդությունն է իշխում, բայց միշտ նոր ժամանակների ոգուն համապատասխան:

Ըստ երևույթին, հենց այս իրողությունների պատճառով էլ այդ երգերը կոչվել են «Հայրենի կարգաւ», այսինքն, ըստ հերոս-նախնիների և կտրիճ-հայրերի կտակի ու ավանդների:

Ուշագրավ են, օրինակ, հայրեն-անտունների մեջ պահպանված այն հուշերը, որոնց համաձայն յուրաքանչյուր երեխա նախ և առաջ «հայրենի» պարգև է, «հայրենի» է.

---

59 *Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 199:*
60 *Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 91:*

Օ՜ր, օ՜ր, օ՜ր, օ՜ր, Հայրենի,
Քու ծոցն է արմավենի...[61]

Օ՜ր, օ՜ր, օ՜ր, Հայրենի.
Հայրենի ծառդ արմավենի...[62]

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը պատմական անհրաժեշտությամբ, անցյալ ժամանակներում ունեցել է հասակային դասեր, երիտասարդական կազմավորումներ, կտրիճվորաց եղբայրություններ, որոնք խոր անցյալում նպատակ են ունեցել հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ ու խելոք սերունդ։ Եվ ահա, իր ժամանակի կրոնա-սոցիալական իրադրությունների համաձայն, այդ երիտասարդությունը դաստիարակվել է երևակայական հերոս-նախնիների և համապատասխան աստվածությունների օրինակով։ Վերջիններս, անշուշտ, սկզբնապես տարբեր անուններով են կոչվել (Թուխ Մանուկ, Խոր Մանուկ, Վարդգես Մանուկ, Աղեկ Մանուկ, Թուխ այր, Թուխ կտրիճ, Աղեկ կտրիճ և այլն), իսկ հետագայում աստիճանաբար համախմբվել Թուխ Մանուկ անվան ներքո։ Համապատասխան ուխտատեղիների հետ են կապվել ոչ միայն ծիսական արարողություններ, այլև համաժողովրդական հանդիսավորություններ՝ մրցույթներով, երգերով ու պարերով։ Ինչպես վերևում տեսանք, հակառակ քրիստոնեության ծավալած պայքարին, Թուխ Մանուկ սրբավայրերը, թեկուզ և փլատակված, գոյատևել ու հասել են մինչև մեր օրերը։ Պահպանվել են նաև մատենագրական, ազգագրական և բանահյուսական հարուստ նյութեր, որոնց բոլորի համատեղ քննությամբ նոր լույս է սփռվելու հայ ժողովրդի և նրա մշակույթի պատմության էջերի վրա։

О ПАМЯТНИКАХ, НАЗЫВАЕМЫХ «ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ»

Доктор историч. наук А. Ш. МНАЦАКАНЯН

(Резюме)

Армянские этнографы и архитекторы собрали немало сведений о местах паломничества и памятниках, связанных с культом *«Թուխ Մանուկ»*'а —«Смуглого Юноши». Кроме того, в армянских фольклорных и письменных источниках сохранились ценные свидетельства о «Смуглом Юноше», до сих пор не обращавшие на себя внимания специалистов. Наши наблюдения приводят к выводам, касающимся как памятников и мест паломничества, относящихся к культу «Смуглого Юноши», так и соответствующих свидетельств о них. «Смуглые Юноши» — это мифологические герои-предки языческого периода, почитание которых хотя и преследовалось христианством, однако в силу живучести народных традиций просуществовало до XX в.

---

61 *Ա. Քեչյան, Մ. Պարսամյան, Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 575։*

62 *«Բյուրակն», 1887—1888, էջ 601։*